

ՀԱՎՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՏՎԱԾՆԵՐ Ս. ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՅՈՒ «ԽԱՐՍԽԵԱԼ» (ΑΓΚΥΡΩΤΟΣ) ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայրաբանությանը քաջ հայտնի այս աշխատությունը Արևելա-քրիստոնեական մտքի կարևորագույն հուշարձաններից մեկն է (374)¹: Նրա մեջ մեկտեղված են քրիստոնեական աստվածաբանության այն բոլոր նվաճումները (Երրորդաբանություն, Քրիստոսաբանություն և հատկապես Սուրբ Հոգու աստվածաբանություն), որոնք Եկեղեցին հաստատագրել էր վերջին հիսնամյակի (325-374) ընթացքում: Աշխատության եզրափակիչ մասում գետեղված են երկու Հավատո Հանգանակներ, որոնցից մեկը գրեթե քառացիորեն համապատասխանում է Կ. Պոլսի Հանգանակին, մյուսի ծագումը պարզված չէ²: Ինչպես նկատել է Լ. Յ. Գաթրճեանը, Հայ Եկեղեցու Հավատո Հանգանակը մուսուլման է տվյալ երկի վերջում (զլ. 119) գետեղված Կ. Պոլսի Հանգանակին, որն իրականում այլ քան չէ. քան Նիկիո Հանգանակը³ (ամենա տարբերություններով)⁴: Այս իրողությունն ինքնին վկայում է այն կարևոր դերի մասին, որ խնդրո առարկա աշխատությունը կատարել է Հայ Եկեղեցու դավանաբանության պատմության մեջ: Նույնքան կարևոր դեր է վիճակվել Ս. Եպիփանի մյուս՝ «Դեղատուփ» (Πανάριον) աշխատությանը, որ հայացվել է Ե դարում ամենայն հավանականությամբ Եզնիկ Կողբացու ձեռքով և ընդարձակորեն օգտագործվել նրա «Եղծ աղանդոց»-ում⁵: Պետք է ենթադրել, որ «Խարսխեալ» երկը նմանապես թարգմանվել է Ե դարում: Բանն այն է, որ այդ երկից մի քանի հատվածներ գետեղվել են Է դարում կազմված «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մեջ⁶: Հայ

¹ S^tu Migne, PG. t. 42, col. 11-236:

² S^tu Г. В. Флоровский, Восточные отцы IV века, Париж, 1931, с. 201.

³ Migne, PG. t. 42, col. 232-233:

⁴ Լ. Յ. Գաթրճեան, Հանգանակ հաւատոյ, որով վարի Հայաստանեայց Եկեղեցի. քննութիւն հանգանակին ծագման, հեղինակի եւ ժամանակի վրա, Վիեննա, 1891, էջ 27: Լ. Յ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հտ. Ա, Վիեննա, 1895, էջ 84:

⁵ Լ. Գ. Գալեմբեքեան, Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացոյ, Վիեննա, 1919:

⁶ «Կնիք հաւատոյ Ընդհանուր Սուրբ Եկեղեցոյ...» աշխատ. Կարապետ եպ. Տեր-Մկրտչյան, Էջմիածին, 1914, էջ 26-31: Ներկա հրապարակումը (քննադիր Ա) հաստատում է Կարապետ եպիսկոպոսի թեաքադ հայտնած միտքը հատվածիս «Խարսխեալ»-ի մաս լինելու վերաբերյալ (Ներածութիւն, էջ XLVIII): Սակայն պետք է նկատել, որ այդ քաղվածքը ոչ թե «Խարսխեալ»-ի մեջ գետեղված Հավատո Հանգանակի մի բեկորն է, ինչպես կարծում է գիտնականը, այլ բերված է այդ աշխատության մեկ այլ մասից:

միջնադարյան մատենագրության մեջ այս երկի վայելած հեղինակության և կիրառման մասին է անուղղակիորեն վկայում Մխիթար Այրիվանեցին: Իր ժամանակագրության մեջ նա հիշում է նաև Ս. Եպիփան Կիպրացու այս աշխատությունը. «*Հոյովսունք չար աղանդոց հերձուռնողաց, որք ի սկզբանէ աշխարհի սերմանեցան ընդ ժամանակս ժամանակս, որ ի հեթանոսաց եւ ի կարծիս քրիստոնէութեան ազգի ազգի խաւարային շատաւորք վերաբունեալք հակառակ Եկեղեցոյ Քրիստոսի, զոր կարգեաց սքանչելիս այս Եպիփան զպատճառս եւ զարմատս եւ զժամանակս իրաքանչիւր ի գիրսն իւր, որ անուանեալ կոչի Ունիւկորոս, այսինքն՝ Հաւատոյ գիրս, զոր Պարունակաց Եպիփան կարդան»⁷:*

Հայ մատենագրության մեջ տարտղնված են զանազան հատվածներ Ս. Եպիփանի խնդրո առարկա երկից: Արդեն հիշատակեցինք «Կնիք հաւատոյ»-ում վկայաբերված հատվածների մասին: Հունարեն բնագրի հետ այդ հատվածների հարաբերության չափն ու քնույթը պարզել է Lebon-ը⁸: «Կնիք հաւատոյ»-ում վկայաբերված ընդարձակ հատվածը գոյացել է «Խարսխեալ»-ի III-VIII, X-XI, LXXXI գլուխների տարբեր մասերի համակցումից. III /col. 21 B 13-16/, IV /col. 21C 10-24 B 4 [հատվածս ամփոփ վերապատումն է բնագրի], V /col. 24 B 4-25 A 7/, VI /col. 25 A 8-28 A 6/, VII /col. 28 A 7-29 A 4/, VIII /col. 29 A 5-32 A 11/, X /col. 36 A 9-B 5/, XI /col. 36 C 1-14/, LXXXI /col. 169 A 10-B 13/:

Բ բնագիրը, որ ձեռագրերում հանդիպում է նաև «Ի Պարունակաց գրոց վասն յարութեան մեռելոց» խորագրով⁹, հրատարակվում է համաձայն Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ. թիվ 3782 (= A թ. 57ա-58ա), 993 (= B թ. 214ա-215ա) ձեռագրերի: Այս միավորը կազմված է հունարեն բնագրի LXXXII-LXXXIV, LXXXVI-LXXXVIII գլուխների և LXXXIX գլխի սկզբնամասի համակցումից. LXXXII /col. 172 A 4-B 11/, LXXXIII /col. 172 C 1-173 A 9/, LXXXIV /col. 173 A 10- C 15/, LXXXVI /col. 176 C 8- 177 B 7/, LXXXVII /col. 177 B 8-180 A 6/, LXXXVIII /col. 180 A 7 - D 9/, LXXXIX /col. 181 A 1-3/:

Գ բնագիրն իբրև քաղվածք վկայաբերված է Ժ-ԺԱ դդ. հեղինակ Ստեփանոս Ասողիկ Տարոնեցու Տիեզերական պատմության մեջ¹⁰: Այն քաղված է բնագրի LXI գլխից և, ինչպես պարզել է De Durand-ը¹¹, համապատասխանում է հունարեն բնագրի Πάντα γὰρ δυνάτα τῷ Θεῷ... սկսվածքով հատվածին /col. 125 C 6-11/:

⁷ «Մխիթարայ Այրիվանեցոյ Ժամանակագրութիւն», Ս. Պետերբուրգ, 1867, էջ 61, Հ. 8. Տաշեան, Գշվ. աշխ., էջ 86:

⁸ J. Lebon, Les citations patristiques grecques du Sceau de la Foi-"Revue d'Histoire Ecclésiastique", t. XXV, 1929, p. 16:

⁹ Տե՛ս Հ. Գ. Զարբհանյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց ցանկեաց, Վենետիկ, 1889, էջ 416, Տաշեան, Գշվ. աշխատ., էջ 86-87, «Մայրցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Բ, կազմեց Հ. Բարսեղ վրդ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 215-216, 273:

¹⁰ «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական» (աշխատ. Ս. Մախսեսեանց), Բ տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 223-224:

¹¹ M. De Durand, Citations Patristiques cher Étienne de Taron, - "Armenica", Melanges d'etudes Armeniennes, Venise, 1969, p. 120:

Դ քննարկողը որպես վկայություն քերված է «Տեառն Խաչկայ Հայոց Կաթողիկոսի Բան խոստովանութեան պատասխանի լուծաց գրոյն, զոր արձակեալ էր առ նա մետրոպոլիտն Մելետիոն» խորագրով թղթում¹²: Այն քաղված է LXXX գլխից և համապատասխանում է հունարեն քննարկի 'Ο αὐτὸς Θεός. ο αὐτὸς δὲν θρωπος սկսվածքով հատվածին /col. 168 C 9- D 3/:

Այս նույն քաղվածքից մի փոքրիկ հատված վերապատմով վկայաբերված է նաև «Սահակայ Հայոց Կաթողիկոսի ընդդէմ երկաթնակացն նեստորականացն» թղթում¹³ և Ասողիկի Պատմության մեջ¹⁴:

Ա

Երանելոյն Եպիփանու եպիսկոպոսին Կիպրացոց

III. Թէ Հայր եւ միայն ճշմարիտ Աստուած է. Միածինն եւ միայն ճշմարիտ. վասն զի միայն ի միոջէ Միածինն եւ միայն Սուրբ Հոգին Աստուած ճշմարիտ՝ Երրորդութիւնն ի միութիւն, եւ մի Աստուած՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին: Ըշմարիտ է Աստուած Հայր, ճշմարիտ է Աստուած Որդին, ճշմարիտ է Աստուած եւ Սուրբ Հոգին. Հոգի Աստուծոյ է Հոգի ճշմարտութեան. Երրորդութիւն ի միում անուան թուեալ:

IV. Հայր է լոյս ճշմարիտ. Որդի լոյս ճշմարիտ եւ ի ճշմարիտ լուսոյն եւ ի ճշմարիտ Աստուծոյ, զմի զգալութիւն Աստուածութեանն խոստովանեցուք:

V. Դոյնպէս եւ վասն Սուրբ Հոգւոյն թէ՛ Երթամ, նա զա՛ Հոգին ճշմարտութեան, եւ պատմէ զԱւելոյն իւր մարդկան¹. զճշմարիտ ծնեալն ի ճշմարտէ, զանտեղծն, զանեղծանելին, զանփոփոխելին՝ զհամապագին ի համապագէն, ի Յովհաննէ քաղոգեցեալն զհամապագէն: Քանզի՝ «Որ էն, ասէ Մովսէս, առաքեաց զիս»², եւ Յովհաննէ. «Որ էրն ի ծոց Հայր՝ նա պատմեաց մեզ»³ էն է Որդի, էն է Հայր. Որ էն առ Էիւն՝ ի նմանէ ծնեալ, ո՛չ միացութիւն ընդ Հայր, ո՛չ սկսեալն ի յելն, քայց միշտ Որդի հարազատ ընդ Հայր ծնաւն Որդոյ: Քանզի ո՛չ էր ժամանակ, յորժամ Հայր ո՛չ էր, եւ ո՛չ երբէք էր ժամանակ յորժամ Որդի չէր ընդ Հայր միայնի, զի թէ էր ժամանակ, յորժամ ո՛չ էր Հայր, Հայրն արդեաւք եւ ինքն Որդի էր այլոց Հայր, մինչեւ լինել նմա Հայր Միածինն, եւ կարծեցեալք ի Հայր քարեպաշտել՝ կատարեալ ամբարշտեն: Քանզի յԱստուած ո՛չ ժամանակ եւ ո՛չ ամանակ եւ ո՛չ յոյզն մասն ժամանակի, եւ ո՛չ անհատ ժամու եւ ո՛չ քթթումն ական, եւ ո՛չ բարձրութիւն մտաց ընդունի. այլ որչափ եւ վերասցի քո միտք, զՈրդի տեսանէ ընդ Հայր, քանզի անունդ է նշանակելի. զի յորժամ Որդի կոչես, Որդի ասելով՝ իմա՛ զՀայր, զի Որդոյն հայր իմանի, եւ յորժամ գոչես զՀայր, նշանակես զՈրդի:

¹² Տէս Գիրք թղթոց. Թիֆլիս, 1901. էջ 313-314:

¹³ «Կաղողակից առնել զհողեղինին ...Աստուածութիւն ժողովեաց». Գիրք թղթոց, էջ 448:

¹⁴ «Ինքն Աստուած ինքն մարդ... գերկրայինն ընդ Աստուածութեան». Ասողիկ, Պատմութիւն, էջ 214, M. De Durand, նշվ. աշխ., թ. 120:

¹ Հմմտ. Ամովս Դ 13, Յովհ. ԺՁ 7, 13-14:

² Եւք Գ 14:

³ Յովհ. Ա 18:

VI. Իսկ յորժամ կարեն իշխել եւ ասել, եթէ ո՛չ էր Հայրն հայր, զի եւ զՈրդի իշխեսցես ասել չգոյ: Իսկ եթէ ո՛չ իշխես պատիւ յաւելոյլ ի Հայր, քանզի Աստուածութիւնն ի մօին կա եւ ո՛չ կարասի յաւելուածոյ՝ ո՛չ փառաց, ո՛չ յառաջ մատուցման, ուսի՛ր չհայհոյել, ո՛ր որ մարտնչիս ընդ հաւատոյ, մանաւանդ թէ զանձն ի հաւատոյ հալածելով. կամ հաւատայ ի Հայր յանգրակակա՝ ճշմարտութեամբ ծնեալ զՈրդի, եւ միշտ արդարեւ զՈրդի ծնեալ: Քանզի Որդի միշտ գոյր ընդ Հայր, ո՛չ եղբայրակից, այլ՝ Որդի հարազատ՝ ի Հայրն ծնեալ բարութեամբ, եւ ո՛չ եթէ մատուցանելով Որդի համագոյ մեան Հայր, ո՛չ միագոյ, այլ համագոյ, քանզի ո՛չ է միացութիւն Հայր եւ ո՛չ եղբայրակցութիւն, այլ համագոյ, այսինքն է՝ արտաքոյ Հայր ծնեալ, որպէս ոմանք պատրանս ի մէջ բերեն առնելով՝ կամին ասել զՈրդի, եւ ո՛չ ճշմարտութեամբ: Իսկ մի բնութիւն հաւատոյ զհամագոյն ասելի է. զի թէ ասես համագոյ՝ լուծեք զգաւրութիւն Սաբելի. զի ուր համագոյութիւն է, անձնաւորութեան մշանակ է, իսկ անձնաւորութիւն մշանակէ զՀայր, եւ անձնաւորութիւն մշանակէ զՈրդի, եւ անձնաւորութիւն՝ զՍուրբ Հոգին: Յորժամ զհամագոյն ասէ, ո՛չ ատար ի մոյն Աստուածութեանն մշանակէ, այլ Աստուած յԱստուծոյ զՈրդի եւ Աստուած յԱստուծոյ զՀոգին, յԱստուածութենէ՝ ո՛չ երիս Աստուածս. քանզի ո՛չ է բազում աստուածութիւն յԱստուած. մի է մեր Աստուածս, որպէս եւ երանելին ասէ Մովսէս. «Տէր Աստուած քո Տէր մի է»⁴: Իսկ ի ձեռն երկց անուանց մի է Աստուածութիւն՝ Հայր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն մշանակ է, եւ ո՛չ երկու որդիք. քանզի միածին է Որդին: Իսկ Սուրբ Հոգին Սուրբ Հոգի է Աստուծոյ, որ միշտ Աստուած ընդ Հայր եւ Որդւոյ, ո՛չ ատար յԱստուածոյ գոյ՝ ի Հայրն ելանելով եւ յՈրդւոյն առնելով. Այլ Որդին Միածին անհասանելի, եւ յԱստուծոյ ո՛չ օտար՝ ի Հայրն եւ յՈրդւոյ. ո՛չ միացութիւն է Հայր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, այլ երրորդութիւն միշտ է՝ ի մօին գոյութենէ. ո՛չ այլ գոյութիւն արտաքոյ Աստուածութեանն, ո՛չ այլ Աստուածութիւն արտաքոյ գոյութեանն. այլ գոյն Աստուածութիւն, ու ի մօին Աստուածութենէ է Որդի եւ Սուրբ Հոգին:

VII. Եւ Հոգին Սուրբ Հոգի, եւ Որդին Որդի, քայց Հոգին ի Հայրն ելանելով⁵ եւ յՈրդւոյն առնելով⁶, որ քննէ զխորս Աստուծոյ՝ պատմելով զՈրդւոյն յաշխարհի, սրբելով զսուրբս ի ձեռն երրորդութեանն, երրորդ անուանութեամբք՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. Գնացէ՛ք, ասէ, մկրտեցէ՛ք յանուն Հայր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն⁷. Վերակնիք շնորհին միութիւն երրորդութեանն: Ո՛չ օտար ի թոռն, ո՛չ որոշեալ յանուանակոչութենէն, ո՛չ ատար ի պարգես, այլ մի Աստուած, մի Հաւատ, մի շնորհ, մի եկեղեցի, մի մկրտութիւն. քանզի միշտ երրորդութիւնն երրորդութիւն է, եւ ո՛չ երբեք յաւելուած ունի, այսպէս թուեալ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի. ո՛չ միացութիւն է Սուրբ երրորդութեանն եւ ո՛չ որոշումն է ի սոսիս յիրեանց անձ միութենէ: Իսկ յանձնաւորութեանն կատարման կատարեալ Հայր, կատարեալ Որդի, կատարեալ եւ Սուրբ Հոգին՝ մի Աստուածութիւն է մի կատարումն. քանզի ոչինչ է յերրորդութեանն հաստելի կամ յաւելուած լինելի:

Արդ, Հայր Որդի ծնանի, քայց ո՛չ ժամանակ, յորժամ ո՛չ էր Որդի, քանզի եւ ո՛չ Հայր երբեք ի ժամանակի Հայր կոչիւր, այլ էր միշտ Հայր, էր միշտ Որդի, ո՛չ եղբայրակից, այլ Որդի՝ ծնեալ անպատումն եւ անուանեալ անհասանելի. ընդ Հայր

⁴ Բ Օր., 2 4, Մարկ. ԺԲ 29:

⁵ Տե՛ս Թովմ. ԺԵ 26:

⁶ Տե՛ս Թովմ. ԺԶ 14, 15:

⁷ Մատթ. ԻԸ 19:

Քանապագ գոյով, եւ ո՛չ երբեք պակասեալ: Յետեմէն Հայր միշտ անել եւ անեղծ եւ անհասանելի. Որդի ծնեալ, այլ անստեղծ եւ անհասանելի. Սուրբ Հոգին միշտ՝ ո՛չ ծնանելի եւ ո՛չ ստեղծանելի, ո՛չ եղբայրակից, ո՛չ հարեղբայր, եւ ո՛չ հաւ գոյով եւ ո՛չ թոռն, այլ ի մօին գոյութեմէ՝ ի Հայր եւ յՈրդոյ եւ Սուրբ Հոգոյն. քանզի «Հոգի է Աստուած»:⁸

VIII. Իսկ յիրաքսանչիւր անուանց միացուցց ո՛չ ունին գերկրորդն, քանզի Հայրն Հայր, եւ ոչինչ է այլ մմանագիր Նմա, եւ ո՛չ այլ ոք Հայր լծակցեալ, զի մի՝ *Α* /երկու/ աստուածք. եւ Որդին Միածին Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ո՛չ զՀայր ունելով զանուն եւ ո՛չ աստար ի Հայրէ, այլ Որդի Հայր գալով: Իսկ Միածին, զի անուանեցի մի Որդի. Աստուած յԱստուծոյ, զի զմի ունի Աստուած Հայր, եւ Որդի կոչի Միածինն: Եւ Հոգին Սուրբ ո՛չ ունելով զանուն Որդոյ, եւ ո՛չ զՀայր, այլ Հոգին Սուրբ՝ այնպէս կոչելի է. ո՛չ աստար ի Հայրէ. քանզի Միածինն ասէ՝ Հոգին Հայր⁹, եւ՝ Որ ի Հայրէ եղանէ¹⁰, եւ՝ Յինչն առցէ¹¹. զի մի՝ աստար կարծեսցի ի Հայրէ եւ յՈրդոյ, այլ ի մոյց եակամ Աստուածութեմէ: Հոգին Սուրբ՝ Հոգի ճշմարտութեան, Հոգի Աստուծոյ, Հոգի մխթարութեան, միացուն կոչեցեալ՝ չունելով զմնացն եւ ո՛չ ունեք հաւասարելի, այլ Հոգոյ. եւ ո՛չ կոչիլ յանուն Որդոյ եւ կամ անուանիլ յանունութիւն Հայր, զի մի՝ ի մի անուն մնացունք կարծեսցին: Բայց զի Աստուած, այլ Հայր Աստուած եւ Որդի Աստուած. է Հոգի Հայր եւ Հոգի Քրիստոսի, ո՛չ ըստ ի մեզ գուգմանց, որպէս ի մեզ շունչ եւ մարմին, այլ ի մէջ Հայր եւ Որդոյ, ի Հայրէ եւ յՈրդոյ, Երրորդութեամբ. քանզի՝ Գնացէ՛ք, ասէ, մկրտեցէ՛ք յանուն Հայր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն¹²: Զի թէ մկրտէ Հայր, յանուն իր՝ յանուն Աստուծոյ եւ կատարեալ կմիքն յանուն Աստուծոյ կցեալ է ի մեզ: Մկրտէ եւ Քրիստոս յանուն իր՝ յանուն Աստուծոյ, եւ կատարեալ է կմիքն ի մեզ յանուն Աստուծոյ: Ո՞վ իշխեսցէ պատերազմել ընդ իւր ոգիս, եւ զՀոգին Սուրբ աստար յԱստուածութեմէն ասելով. քանզի եթէ յանուն Աստուծոյ կցեիմք՝ եւ յանուն Որդոյ եւ յանուն Սուրբ Հոգոյն. մի կմիք է Սրբոյ Երրորդութեանն, եւ ապա մի գալութիւն է Աստուածութեան Երրորդութեանն:

X. Քանզի մի է Աստուած յՈրդոյն, եւ Որդի է Հայր՝ հանդերձ Սուրբ Հոգովն, եւ վասն այնորիկ Սուրբն ի Սուրբս հանգուցեալ է: Հայր ճշմարիտ յանձնատրութեան, Որդի ճշմարիտ յանձնատրութեան, եւ Սուրբ Հոգին յանձնատրութեան. *Գ* /երիս/ գոյով՝ մի Աստուածութիւն, մի էութիւն, մի փառաբանութիւն: Մի Աստուած անուանեցեր զՈրդի, ընթոնցեր ի մի մտաք գերրորդութիւնն: Ընկալար զՀոգին Սուրբ, արժանացար զաւրութեան հայրեմոյ եւ Որդոյն Աստուծոյ: Փառաւորեցեր զՀայր՝ ճշմանակեցեր զՈրդի եւ զՀոգի Սուրբ. Որդի է Որդին եւ Սուրբ Հոգի է Հոգին Սուրբ, այլ ո՛չ աստարացեալ Երրորդութիւնն ի միութեմէ, կամ յինքնութեմէ: Իսկ պատուի Հայր ըստ այնմ, զի Հայր է. իսկ պատուի Որդի ըստ այնմ, զի Որդի է ճշմարիտ. պատուի եւ Հոգին ճշմարիտ, զի ճշմարիտ է Հոգի Աստուծոյ: Այնպէս ասէ Որդին. Որ պատուէ զՀայր, պատուէ եւ զՈրդի¹³. քանզի յասելն Հայր՝ զՈրդի ճշմանակեալ եւ զՈրդի պատուես, եւ պատուելով զՈրդի՝ պատուէ զՀայրն, ո՛չ կրտսեր զՈրդին ասելով Հայր:

⁸ Թովհ. Դ 24:

⁹ Մատթ. Ժ 20:

¹⁰ Թովհ. ԺԵ 26:

¹¹ Հմմտ. Թովհ. ԺԶ 14:

¹² Մատթ. ԻԸ 19:

¹³ Հմմտ. Թովհ. Ե 23:

XI. Քանզի թե ի մեզ ի մարդկան այնպիսի խորհուրդք, զի ո՛չ կրտսերագոյնք կամիմք գորդիս եւ ի վայր քան զհայրենի պատիւն, քանզի եւ յորդիս անարգանքն ի Ռարս համարեալ են, ո՞ր պատուեցէ ճշմարտութեամբ գոյ զՀայր՝ զՈրդի մեկնեալ ի հայրենի փառացն կարծելով. ո՛չ առաւել անպատուէ՝ փոխանակ պատուի, յանգիտութենէ յաղթեալ: Վասն զի Որդի յայտնէ զՀայր ասելով. «Ոչ ոք գիտէ զՀայր, բայց Որդին, եւ ո՛չ ոք գիտէ զՈրդին, բայց Հայր ¹⁴. Իսկ իշխեմ ասել, եւ ո՛չ զՀոգի ոք գիտէ, բայց Հայր եւ Որդի, յորմէ ելանքն եւ յորմէ առնուն»:

14 / Քանզի ինքն Աստուած գիտէ, զինքնն Քրիստոս քարոզէ եւ զինքնն Սուրբ Հոգին յայտնէ արժանեաց: Իսկ ի Գիրս սուրբս Երրորդութիւն մեզ պատմի եւ հաւատարի եւ ամբննելի, եւ անհակառակելի եղելոց լսաւիաց: Իսկ ի հաւատոյս յայսմանէ փրկութիւն շնորհի. ի հաւատոց է արդարութիւն՝ առանց գործոց արիմաց ¹⁵: Գրեալ է եթէ՝ ի լոյն հաւատոյ ոգին Քրիստոսի տունեալ լինի ապրեցելոցն ¹⁶: Բայց հաւատ ամենայն քարոզացն ծայնիւ այս մշանակի, որպէս եւ կարծեմ ի միտ առեալ ի Գրոց Սրբոց՝ երեք սուրբք, երեք սրբակիցք, երեք իրագործք, երեք իրակիցք, երեք անձինք, երեք անձնակիցք, միմիանց էակիցք: Երրորդութիւն այսուիկ կատարի. երեք էք՝ մի կամակցութիւն, մի Աստուածութիւն՝ ի մոյն էութենէ, ի մոյն զարութենէ, ի մոյն անձնաւորութենէ. մմանիք մմանոց հաւասարութիւն շնորհին գործի՝ Հայր եւ Որդոյ եւ Հոգւոյն: Բայց զորպիսութիւն մոցա անկարեմք յուսուցանել:

LXXXI. Ասէ յԱւետարանին. Մկրտեցէ՞ք զնոսա յանուն Հայր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյ ¹⁷: Բայց ի մէջ էիցս ո՛չ միացութիւն մշանակեաց զՈրդին ի Հայր, եւ ո՛չ միացութիւն զՍուրբ Հոգին ի Հայր եւ յՈրդի, այլ զՀայր գիտէ Հայր ճշմարիտ եւ զինքն ճշմարտեցոյց անձնաւոր Բանն, եւ Հոգին մորա անձնաւոր Հոգի եւ Հոգի ճշմարտութեան՝ անստեղծ, անյելլի, անայլալլելի: Բայց ո՛չ որպէս կարծեսցէ ոք՝ նենգաւորութիւն բերելով ի հաւատն եւ զմերձաւորութիւն մորա ծածկելով եւ նենգելով առ լսաւսն, զի «Քճճէ զսիրտս եւ զերկկամունս Աստուած» ¹⁸ եւ ասէ եթէ՝ հաւատա՞ս, զի Հայր Հայր եւ Որդի Որդի եւ Սուրբ Հոգին Հոգի Սուրբ, ո՛չ խոստովանելով երիս անձինս ի միում էութեանն: Բայց ո՛չ այլ ասեմ գոյութիւն արտաքոյ Աստուածութեանն, եւ ո՛չ այլ Աստուածութիւն արտաքոյ էութեանն. այլ վասն այսպիսոյ ստուգագոյն զէութիւնն կոչեմք. զի մի՛ այլեւայլ տեսումն ասասցոյք Աստուածութեան Երրորդութեանն:

Բ

Երանելոյն Եպիփանու Եպիսկոպոսի Կիպրացոյ ի Հաւատոց գրոց

LXXXII. Եւ արդ, զամշարծ խոստովանութիւնն, որ յարիմացն եւ ի մարգարէիցն եւ յաւետարանչացն եւ յառաքելոցն ¹ մինչեւ ի ժամանակս ի տիեզերական եկեղեցւոյն անապականութեամբ պահեալ եւ ըստ ժամանակի ի ձեռն

¹⁴ Մտթ. ԺԱ 28, Ղուկ. Ժ 22:

¹⁵ Հմմտ. Հռովմ. Գ 28:

¹⁶ Հմմտ. Գաղատ. Գ 2:

¹⁷ Մատթ. ԻԸ 19:

¹⁸ Սաղ. Է 10:

հերժուածողաց զճոյն հաւատ եւ զյոյս եւ զփրկութիւն մեր հալածեալ: Այլ համբերութիւն ընկալեալ եկեղեցւոյ սրբոյ² ի սոյն եկեղեցւոյ ճշմարտութեան³ աղանդոյն ըստ իւրաքանչիւր ժամանակի զինքեանս ապականելով եւ եկեղեցւոյ սրբոյ արտաքս հանելով⁴, եւ յեկեղեցւոյ զինքեանս արհամարհելիս երեւցուցեալ⁵, որպէս եւ⁶ առժամայն: Դարձեալ ասեմ զոմանց, որք եւ զանդրանկութիւնսն կարծեն բերել առ ոմանս, որք լեզգիպոստ կրանատըք են եւ ի Թեքայի⁷ եւ այլոց այլոց⁸ կողմանց զմանսն աղանդոյն խորհելով⁹: Եւ որք ասեն, թէ յարութիւն մեռելոց մարմնոցս ո՛չ այսրէն, այլ յայլոց ուրումն յայսմանէ իբրեւ յեղեկացն¹⁰ աղախսեացն¹¹, եւ յառասպելս համարեալ զԱստուծոյ ճշմարտութիւնն եւ զանշարժելի¹² մեր յոյսն: Վասն որոյ հարկատրիւ միւս անգամ ասել:

LXXXIII. Հանգի անհաւատքն ուրանամ զամենայն վասն յարութեան: Իսկ չարահաւատքն անարժանապէս եւ անզգայութեամբ ի ճշմարտութեան յուսոյն ամկամ: Եւ հեթանոսք իսկ, որ բնաւի՞ն ուրանամ զյարութիւն վասն բազում ամբարշտութեանն, զի ի ճոցանէ եղեալ անալիքութիւն, ատեն զյարութիւնն¹³, որք զԱստուած ոչ ճանաչեն եւ՝ զՆորիցն պատուիրանն, բայց յարիցեն թշուտ եւ ոչ կամից: Ինքեանք իսկ արարածք յայտնապէս զնոսա յանդիմանեն՝ ցուցանելով¹⁴ հանապազ զյարութեան տեսումն: Վասնզի¹⁵ մտանէ ար, եւ¹⁶ մեռելութեան մանանցուցանենք զարիմակ ճիրմամբ գիշերոյ, ծագէ տիւ զմեզ յարուցանելով՝ զյարութեան ցուցանելով զարիմակ¹⁷, կթին պտուղք եւ երեսումն գոյիցն կտրին՝ զմեր աւտի¹⁸ հրաժարումն ցուցանեն դէմքն: Սերմանի երկիր եւ բուսուցանէ, զի թաղեալքն զկնի թաղմանն¹⁹ յարիցեն: Մարախ մեռանի՝ թաղեալ յինքենէ զճնուդոյս յերկրի եւ յետ ժամանակի երկիր մեռեալսն²⁰ յարուցանէ: Իսկ սերմանիք արդեանցն սերմանին եւ նախ մեռանին եւ ապա ի կատարումն զան, քանզի եթէ ոչ մեռանին՝ ոչ կենդանացին: Կնիքս ի մեզ Աստուած արար ի ձեռն եղեզանց²¹ տան²² տասն յարութեան²³ վկայս, այլ իբրեւ ի ձեռն պսակի ի վերայ գլխոյն, ի ձեռն հերացն զյարութիւն՝ մեզ քարոզեաց: Հանգի կարծեցեալն ի մեզ մեռեալ մարմին, այսինքն հերք եւ եղեգունք հանապազ կտրեալ, եւ կտրեալքն հանապազ աճեն՝ ճշմանակելով զյարութեան յոյս²⁴:

LXXXIV. Եւ անբաւ է ասել ի հաճութիւն անհաւատիցն ի տարացոյցս²⁵: Այլ ոչ հաւանեցոյց զնոսա հոփալն ի հաւս, եւ ոչ առնէտն ի չորքտանհիս, քանզի մեռանի այսպիսին զվեց ամիս եւ հոփալն զիս/քառասուն/ ար: Եւ դարձեալ յետ ժամանակի իրեանց կենդանանան: Իսկ թղտունքն²⁶ յորժամ մեռանին, ի գունդս²⁷ աղբոյն զինքեանս թաքուցանեն²⁸ զայսպիսի գունդս եւ թաղեալն այսպիսի²⁹ ի սորին շերտութեանէն³⁰ գտանի կենդանացեալ իրեանց մնացուածոյն: Բայց³¹ վասն արմաւ հաւտն առելի է ինձ ասել, վասնզի բազում անգամ հասեալ է այս ի լսելիս բազմաց հաւատացելոց եւ անհաւատից: Եւ վասն ճորա պատճառք այս են, քանզի հինգ հարիւր ամաց ժամանակ կատարեալ յայնժամ իմացի զիւր ժամ մահու հասեալ, բոյն շինէ ի խնդոց եւ ի գնուոս փայտէ: Եւ բերելով զա յԱրեգ քաղաք այսպէս կոչեցեալ, որք են թարգմանեալ ի յերրայեցոյց լեզուին ի լեզգիպտացոյցն: Եւ ոտիւք իւրովք բազում անգամ զլանջսն տանջէ, հուր ի մարմնոյ իւրում արտաբերելով տոչորի ի ճեղքոյ եղեալ միւրն ի տեղւոյն: Եւ այսպէս ողջակիզեալ զամենայն մարմին իւր՝ հանդերձ ոսկերաւքն: Իսկ յԱստուծոյ տեսչութենէն ամպ առաքի եւ թանա զբոյնն, որ զմարմին հաւտն ծախեաց: Իսկ մեռեալ գլով հաւտն եւ խորովեալ, ի սպառ շիջեալ ապա բոցոյն՝ ճշխարք մարմնոյ ճորա եւս հում մնացեալ լինի: Եւ ի միում աւուր ապականեալն որդն ծնանի, իսկ որդն թես բերէ ձագ եղեալ՝ յերրորդում աւուր զարգանա եւ զարգացեալն, որք զտեղեանն ճշմարտագոյն բնակեն, արթանեկին տեղւոյն, զինքն երեւցուցանէ եւ դարձեալ երթա անդրէն յիւր գաւառն, ուստի եկեալն էր:

գարմանալ ընդ Աստուծոյ զարութիւնն, զի ոչ եւս հոգիքն մտեալք եւ ոսկերքն ցամաքեալք ոչ միայն զշարժմանցն ընկալան զարութիւն, այլեւ իմացմամբ ոսկերքն³⁵ լցան եւ զիտութեամբ ոչ սակաւ: Քանզի ոչ եթէ ոսկր ոտին առ մասունս զլիտյն մոռացմամբ գնացին եւ ոչ պարանոցին շրջանակք առ ի պնդմացն խառնուածս մոլորեալք գտնելի խնդրէին, այլ իրաքանչիւր ոք յոսկերացն շարժէին եւ գնային, եւ իրաքանչիւր զդիրսն ծանեան եւ յիրաքանչիւր յալոսն յարմարեցան: Իսկ եթէ կամի Աստուած՝ կարող է զմարմինս առանց հոգւոյ յարուցանել, քանզի յայսմ կարողութիւն իւր եցոյց զառ ի մարդկանէ զանյուսացեալն զայն նախ կենդանացուցանել ի ձեռն Եզեկիելի: Եւ ոչ ասաց նախ թէ որդի մարդոյ ասա զալ զհոգիսն, այլ զկնի դժուարագունին զդիրան հրամայեաց վասն հաւատոյ: Բայց ասէ զմարմինս ժողովել. յայնժամ ոգոցն հրամայեաց մտանել ի նոյն մարմինս. «Եւ յարեան ժողովք բազմաց»³⁶: Քանզի կարող է Աստուած առնել, զի եւ մարմինք առանց հոգւոյ կենդանասցին, որպէս եւ տեղեակ եղաք: Այլ ոչ կարէ յինքննէ դատիլ մարմին, քանզի ունի իրաւամբք տալ պատասխանի³⁶ Աստուծոյ դատաստանին, զի ունի եւ նա³⁷ ասել, եթէ հոգւոյն եմ յանցանք ոչ եւս ես պատճառք, քանզի³⁸ յորմէ հետէ անջատեցաւ ի նմանէ մի՞թէ շնացաւ կամ պոռնկեցաւ կամ գողացաւ կամ թէ անառակութիւն ինչ գործեցի: Եւ լիցի, ըստ հակառակասիրացն, լռել Աստուծոյ դատաստանին: Վասն այսորիկ որպէս էին հոգին եւ մարմին յարակացեալ, դարձեալ արդար դատաւորն զմարմինն յարուցանէ եւ զհոգին ի նմա տա: Եւ այսպէս արդար լինի Աստուծոյ դատաստանն երկոցունցն հաղորդել. եթէ վասն մեղաց ի տանջանս, եւ եթէ վասն աստուածապաշտութեան յարգադրութիւնն³⁹, ըստ առաջիկայ հատուցմանցն սրբոց եւ անսրբոց⁴⁰ եւ եթէ վասն մեղաց ի տանջանս⁴¹:

LXXXIX. Իսկ զայսոսիկ առ ի յանդիմանութիւն ճշմարտութեան մերոյ⁴² յուսոյն կարծեցեալ բտական⁴³ սակաւ⁴⁴ ի բազմաց առաջի եղաք:

Տարընթերցումներ

Խորագիր B Երանելոյն Եպիփանու Կիպրացոյ ի Հաւատոց գրոց:

Բնագիր 1 B յառաքելոցն եւ յաւետարանչացն: 2 A չիք սրբոյ: 3 B ի նոյն խոստովանութեան ճշմարիտ փխ. ի սոյն ... ճշմարտութեան: 4 A չիք եւ եկեղեցւոյ... հանելով: 5 B Բայց նախանձեմ ընդ իմոյ ճշմարիտ հաւատոցս իսկ երեւեցուցանել փխ. յեկեղեցւոյ զինքեանս ... երեւեցուցեալ: 6 A չիք եւ: 7 B Թերայիս: 8 B այլ: 9 A չիք աղանդոյն խորհելով: 10 B լեղլեացն: 11 այսպիսեաց: 12 A շարժելի: 13 B զյարութիւն: 14 A ցուցանեն: 15 A Քանզի: 16 B չիք եւ: 17 B զճշմանակ փխ. զարիմակ: 18 A աստէն: 19 A թաղման: 20 B մեռեալն: 21 B եղկական: 22 B վրան սխալագրութեան նշան: 23 A յարութեանն: 24 B ցոյց փխ. յոյս: 25 A տարացուցացս: B տարացուցուցս: 26 A բնդոտնքն: 27 A գունդ: 28 A թաքուցեալ: 29 A թաղելով զայսպիսի գունդս փխ. զայսպիսի ... այսպիսի: 30 A շերտութենէ: 31 B իսկ փխ. Բայց: 32 B առանձ: 33 B հոգւոյ յինքննէ փխ. շարժել ... հոգւոյ: 34 B չիք սուրբ: 35 B չիք ոսկերքն: 36 A պատասխանատրութիւն: 37 A ունի ասել: 38 A վանզի փխ. քանզի: 39 A չիք յարգադրութիւնն: 40 A սրբոց վարձս հատուցմանց փխ. սրբոց եւ անսրբոց: 41 B չիք եւ եթէ ... տանջանս: 42 B չիք մերոյ: 43 B բտական կարծեցեալք: 44 A սակայն փխ. սակաւ:

** Ա.ճ. Լէ 10:

Գ

Եւ սրբոյն Եպիփանոս ի Պարունակախաւսն ասացեալ է, եթէ՝

Ամենայն ինչ կարողութիւն է Աստուծոյ. եւ զապականեալն փոխել յանապականութիւն: Եւ մի ոք զարմասցի, ասէ. քանզի զայս եկմ ի ցուցանել եւ եցոյց առնել յապականելի վարմնոյն եւ զգեցուցեալ Աստուածութեանն եւ ցուցեալ անապականելի, քանզի իւ յանդիմանէ զԱստուած, եւ յանդիմանէ, որ ոչ խոստովանի զտնարէնութեան խորհուրդն, այլ ուրանայ, որ ոչ հաւատայ զմիաւորութիւն բնութեանն, այլ բաժանէ յԱստուած ուրոյն եւ ի մարդ ուրոյն, յանապական եւ յապականացու, յանմահ եւ ի մահկանացու եւ յայլ եւս յայսպիսիս:

Դ

Ասաց սուրբ Եպիփան եպիսկոպոս Կիարացոց ի գիր Հաւատոյ, եթէ՝

Ինքն Աստուած եւ ինքն մարդ՝ ոչ շփոթութիւն գործելով զերկոսիցն ի միասին խառնելովն, ոչ գոյութեամբ, այլ ի մի զաւրացուցեալ զերկրայիցն ընդ Աստուածութեանն եւ ի մի Աստուածութիւն զաւրացեալ եւ մի Աստուածութիւն ժողովեաց: Ոչ երկու քրիստոսք եւ ոչ երկու որդիք, ոչ այլ ոք եւ այլ ի նոյն մարմին հոգեւորական ի նոյն Աստուածութիւն անհասանելի, չարչարեալն ոչ առականեալ, անապականելին՝ անապականելի, անապականութիւն ամենայն: Աստուած Տէր մտնեալ ընդ աջմէ Հար:

